



ՄԻՐՈՒ ԵՎ ԱՂԴԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԻՉԸ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ

ԽԱՂԵՐԻ ԲԱԹԱՐԱՆ

Նախագծային աշխատանքի ղեկավար՝ Ա. Սարգիսյան

Անդամներ՝

1. Կարապետյան Մարի
2. Խաչունց Գոռ
3. Ճաղարյան Արկադյա
4. Ալումյան Նարե
5. Յուզբաշյան Ալեքս
6. Մալունց Ալյոնա
7. Աղաջանյան Հարութ

Նախաբան



Հայոց հոգևոր ու գեղարվեստական պատմության մեջ Սայաթ-Նովան սուկ աշուղ կամ երգահան չէ. նա հարատևող մի ձայն է, որ անցել է դարերի միջով՝ անսասան պահելով մարդկային սիրո, արդարության և հոգևոր ազնվության պատգամը: Նրա անունը հնչում է նույն թարմությամբ, ինչպես 18-րդ դարում, այնպես էլ այսօր, և յուրաքանչյուր նոր սերունդ կարծես նորից բացահայտում է նրա խոսքի լույսը՝ տոգորված խոհի խորությամբ և զգացմունքի ազնվությամբ: Սայաթ-Նովան երգեց սեր և բարություն՝ ոչ որպես անցողիկ զգացումներ, այլ որպես կյանքի, ճշմարտության և մարդկային գոյության գլխավոր հենասյուներ:

Այս գիրքը ծնվել է այն հավատքից, որ Սայաթ-Նովայի խոսքին մոտենալը պարզապես գրական ժառանգության ուսումնասիրություն չէ. դա ներքին ճանապարհորդություն է դեպի լեզվի մաքրություն, ժողովրդի հոգևոր աշխարհ և մարդու սրտի այն նուրբ թրթիռները, որոնք հաճախ չեն նկատվում

առօրյան աղմուկի մեջ: Աշուղի յուրաքանչյուր տողը մի փոքրիկ աշխարհ է՝ իր ցավով ու հրճվանքով, իր խոհով ու իր բարձրահունչ սիրով, որին Սայաթ-Նովան մոտենում էր որպես նվիրում, որպես հոգևոր ծես:


Ներկայացված բառարանը նպատակ ունի ընթերցողի առաջ բացելու այդ աշխարհը՝ բառ առ բառ, արտահայտությունն առ արտահայտություն:

Սայաթ-Նովայի լեզուն հարուստ է ժողովրդական բառերով, խորհրդանիշներով և նրբագույն պատկերներով, որոնք ժամանակի ընթացքում հաճախ դարձել են դժվարընկալելի: Այս բառարանը փորձում է քնքշորեն բացել այդ բառերի ու պատկերների իմաստը, ներկայացնել նրանց ծագումն ու հնչերանգը, որպեսզի ընթերցողը կարողանա ամբողջությամբ զգալ այն խորությունը, որով ապրում է մեծ աշուղը:

Այստեղ գետեղված բացատրությունները չեն հավակնում միայն լեզվաբանական ճտության, դրանք միաժամանակ հրավեր են՝ մերձենալու Սայաթ-Նովայի ներքին աշխարհին, լսելու նրա սրտի տրոփյունը, զգալու նրա խոսքի երաժշտությունը: Ամեն բառ, որ բացատրվում է այս գրքում, փորձ է՝ արթնացնելու այն ապրումը, որ տվել է հենց Սայաթ-Նովան՝ սեր, կարոտ, հավատ, անսահման մարդասիրություն:

Թող այս գիրքը մոտեցնի մեզ այն ճշմարտությանը, որ Սայաթ-Նովան շարադրում է իր երգերում՝ սերը մարդուն բարձրացնում է, իսկ արդարությունը նրան պահում է ամուր երկրում: Եվ այն ժամանակ, երբ այս երկու արժեքները միավորվում են, ծնվում է այն երաժշտությունը, որը կարող է դիմանալ դարերին:

Թող այս հրատարակությունը լինի փոքրիկ կամուրջ՝ Սայաթ-Նովայի երգի աշխարհը նորովի բազահայտելու, նրա լեզվի մեղեդին զգալու և նրա հոգևոր ժառանգությանն ավելի մոտ լինելու:



Ա

Աբրեշում-մետաքս, մետաքսանման լինելը

ադաբ-համեստություն, քաղաքավարություն

ազա-տանջանք, չարչարանք

ադամորթի-մարդ, մահկանացու, ադամորդի

ալամ-դրոշակ

ալմազ, ալմաս-ադամանդ

աղպուր-աղբյուր

ախրաթ-հադերձյալ կյանք, այն աշխարհը

ակնակապ-վրան թանկագին քարեր շարած

ակռա-ատամ

ահուզար-հառաչանք, հեծեծանք

աղկատ-աղքատ, չքավեր

ամազ-երախտիք, ածխատանք, հոգս

անախտիլի-անհաղթահարելի

անգաճ-1. ականջ, 2.լսողություն

անկանիլ-ընկնել

անհանգչիլի-չհանգչող

անդալամ-նկարչի վիձին չտեսած, անվրձին

անմահութիւն-անմահություն

անմիղ-չնչին, հասարակ

անջաղ-հազիվ, հազիվ թե

անքանար-ափից, եզերքից հեռու, անափ

աջալ-օրհաս, վախճան

աջայիբ-զարմանալի

առուտվան- առավոտյան, վաղորդյան

ասլ-կիրթ, Բարեկիրթ, ազնիվ

սալջադա-քաջատոհմիկ

ասկ-7ազգ, տոհմ

ավալ-նախ

ավտալ-հավատալ, հավատ, ընծայել

արբար-ձեռնհաս, ճարտար

արթար-արդար, մաքուր, անարատ

Բ

բար-համեմատ, համապատասխան

բաղեշխան-Միջին Ասիայում՝ Հինդուուշ լեռներում գտնվող
շրջաններից մեկը, որտեղ գտնվում է լավագույն սուտակը

բաղման-այգեպան

բայաթի-արևելյան երաժշտական տիպի էղանակ

բանդ-կապ, հանգույց

բանդա-ստրուկ, ծառա

բաշ-գալխավոր, բարձր, գերագանց

բափա-հավատարմություն, խոստման պահպանում

բեմուրվաթ-անողորմ, անգութ

բրոյի-բրոյի-բյուրավոր, շատ

բունիաթ-շինություն, հիմք

Գ

գամ-անգամ

գարդիշ-գնալ-գալը

գափ-զվարճախոսություն

գեմի-նավ, առագաստանավ

գլխոք-գլուխ

գոգալ-գեղեցկուհի, աղավնյակ

գոլ-լճակ, լիճ

գուգե-թող, թեկուզ

գուզ-վարդ

գոգբաղ-վարդաստան

Դ

դադ-դատ, դատաստան

դադ-շիկացած երկաթով այրվածք, խարան, դադ

դամբ-ձկնորսական ցացն, որոկան

դուստա-վայել. պատշաճ, թույլատրելի

դավթար-տետր, գիրք, մատյան

դարդակ-դատարկ, մեջը բան չպարունակող

դիվանա-խելացնոր., խեմթ, խջ

դիփ- համակ, ողջ, ամբողջ

դիփուն-բոլորը, ամենքը

դողրու-ճշմարիտ, իսկական

դոստ-մտերիմ, բարեկամ

դովլաթ-հարստություն, լոնեցվածք, կարողություն

դրստիլ-լողղել, շտկել

դուքան-1.խանութ, 2.արհեստանոց

զադ-առարկա, բան

զալում-դաժան, անգութ, անիրվ

զաման-ժամանակ, դարաշրջան

զանջափիլ-կոճապղպեղ

զարբաբ-ոսկեթել կարով մետաքսյա կտոր

զարլու-ոսկեզարդ, ոսկեհուռ

զարոտ-պահանջ, կարք

Է

էհալ-երթալ, գնալ

էնդուր-այն պատճառով

էնտիդ-այնտեղ

էշխ-սեր

էրիլ-այրել, վառել

էրնեկ-երանի

Ը

ըլիլ-1. գոյություն ունենալ, լինել, 2. պատահել, տեղի ունենալ
ընկնիլ-համակվել, տարվել մի բանով
ըսկըսպնական-սկզբնական

Թ

թալնիլ-թալանել, կողոպտել
թաղչա-պատի մեջ փորված կամարակապ դարակներ
թամամ-բովանդակ, ողջ, ամբողջ
թամամիլ-լրանալ, ամբողջանալ
թավագա-հրամցնելը, հյուրասիրում
թեզնիս-բառախաղով կազմված ոտանավոր
թիլա-ոսկի

Ի

իծում-հետո, այնժամ, ապա
իլթիմագ-խնդիրք, աղաչանք, աղերսանք
իման-հավատ, համոզմունք
իստակ-մաքուր, հստակ, անարատ

Լ

լալ-թանկագին քար, ակն, սուտակ

լամգ-ակնկալություն, քողարկված ձևով ասված խոսք

լանգ անիլ-օրորվել, շորորալ

լիղի-դառնություն, որևէ դառնահամ բան

լուր-լոր թռչունը

Խ

խազինա-զանձ, հարստություն

խաթիր-հարզանք, պատիվ

խալիչա-փոքր գորգ

խաս-ընտիր, նուրբ, անխառն

խոմ-չէ՞ որ

խոնթկար-օսմանյան սուլթան

խուցվիլ-խոցվել

Ծ

ծունգ-ծունկ

ծիղ-ծեղ, շյուղ

Կ

կամավ-իր կամքով, իր ցանկությամբ

կանալ-կարողանալ, ի վիճակի լինել

կարքիլ-պաշտոնի՝ գործի նշանակել

կուռ-բազուկ, թև, ձեռք

Հ

հաբաշ-Հաբաշստան, Եթովպիա

հագիր-պատրաստ

հալբաթ-անտարակույս, անկասկած

համաշա-միշտ, շարունակ

համդամ-խոսակից, սրտակից

հանդամ-1. վայելուչ, 2. համաքայլ

հուլ-թանկագին քար, գոհար

Ղ

ղաբուլ-ընդունելի, համաձայն

ղաղիմի-հին, անտիկ

ղալամ-1. գրիչ, 2. վրձին

դամ-վիշտ, ցավ, մտահոգություն

դամիշ-եղեգն

դարա-քարանձավ

դումուշ-մետաքսյա կտոր

դուլուղ-ծառայություն, սպասարկություն

Ճ

ճիտ-վիզ, պարանոց

ճկճկալ-ծլվլալ

ճուխկ-ճյուղ

Մ

մահաթ-ապրանք, հազվագյուտ ընտիր իր

մալ-ունեցվածք, հարստություն

մակամ-մի^օթե, արդյոք

մանդիլ-գլխի թաշկինակ

մասալա-առակ, առած, զվարճալի պատմություն

մեբաշ-հանկարծ, միանգամից

մեհմանդար-հյուրընկալ, ասպնջական

մեյդան-ասպարեզ, հրապարակ

մեջլիս-հանդես, խնջույք

մինա-ոսկյա և արծաթյա իրերի կամ զարդերի վրա եղած
փոսիկներ

Ն

նազլու-նազելի, նազ ունեցող

նալաթ-անիծյալ, նզովյալ

նաղաշ-նկարիչ

նաքազ-ստոր, ցածրահոգի, չնչին

ննգնիրլ-1. ընկնել, նետվել, 2.թափառել

նոքար-ծառա

նոտիլ-վերանորոգել

Շ

շախ-ուրախ, զվարճասեր, կենսուրախ

շամամ-անուշահամ, սեխանման փոքր ու կլոր
բանջարանոցային բույս

շանց տալ-1.ցույց տալ 2.սպառնալ

շառ-1. փորձանք, չարիք 2.գրպարտություն

շուղկ-շողք, ցուք, փայլ, ճառագայթ

Չ

չափարիլ-փշե ցանկապատով շրջափակել

չինար-սոսի ծառը, չինարի

չուն, չունքի-որովհետև, քանի որ

Պ

պակսիլ-նվագել, քչանալ

պատվական-1.պատվի արժանի 2.ընտիր, հարգարժան

պղտուր-պղտոր, ոչ պարզ, ոչ վճիտ

պտռիլ-փնտրել, որոնել

Ջ

ջավահիր-գոհար, թանկագին քար

ջարա-վիրաբույժ, բժիշկ

ջեյրան-եզջերու, կիստար

ջուհար-1.գոհար 2.փայլ, աչքի լույս

ջուրաթ-համարձակություն, խիզախություն

Ռ

ռահմ-կարեկցություն, գութ, ողորմություն

ռաշ-առասպելական նժույգ՝ թևավոր և վեցոտանի

ռեհան-համեմունքային բույս

Ս

սաբաբ-պատճառ, առիթ

սագ-նվագարան

սագանդար-երաժիշտ, նվագող

սահաթ-ժամ, պահ, ժամանակ

սարսիլ-սարսել, սարսափել

սեյրան-1.զբոսանք 2.տեսարան, դիտելու արժանի բան

սիրա-բոց, կրակ, հուր

սովդաքար-վաճառական, առևտրական

սուսամբար-անուշահոտ տերև ունեցող բույս

սուփրա-հաց դնելու սփռոց

Վ

վախտ-ժամանակ

վաշ-հիացմունք արտահայտող բացականչություն

վիթիլ-թափել

վիրչ-վերջը, հետո

վուխպալ-ողբալ, վշտից բարձր ձայնով լալ

Տ

տաղլա-ալիք

տարք-տարիք

տերիվակալ-տերևաշատ, տերևալից

տնդըղիլ-տնտղել, ուշադրությամբ զննել

Ու

ումբր-կյանք

ուշկ-ուշք, ուշադրություն

ուստաքար-վարպետ

ուրդան-ալեկոծում, հորձանք

Փ

փաղիշահ-թագավոր, արքա

փանջարա-շրջանակ, քանդակապսակ

փար-հոյակապ, շքեղ, փառավոր

փափակ-փափագ, մեծ ցանկություն

փիր-ծեր, ծերունի, փորձված, իմաստուն

փոթով-տերև

Փռանգստան-1.Եվրոպա 2.Ֆրանսիա

փրփուր-անցողական, անցավոր, կորնչելի

փութր-քիչ, փոքր

Ք

քալագ-խարդախություն

քամ-1. նվագ, պակաս 2.թեթի, անկատար

քաման-աղեղ

քամանդուր-նետաձիգ, աղեղնավոր

քամար-գոտի

քուրա-հնոց, հալոց, բովք

Օ

օխտը-յոթ

օչով-ոչ ոք

օսկի-1.ոսկի 2.ոսկու նման լինելը

Վերջաբան



Սայաթ-Նովան, որ դարերի խորքից գալիս է որպես սիրո, արդարության և մարդկային վեհության երգիչ, իր ստեղծագործությամբ ձևավորեց մի

ներաշխարհ, որտեղ խոսքը դառնում է անխաթար կամուրջ մարդկանց միջև: Նրա գուսանական արվեստը՝ հագեցած հուզական ճշմարտությամբ և բարոյական արժեքներով, շարունակեց ապրել ոչ միայն երգերում, այլև ժողովրդական հիշողության հազարավոր շերտերում:

Այս բառարանում գետեղված բառերը միմյանց են միահյուսվում՝ արտացոլելով այն բազմազան աշխարհը, որտեղ ծնվեցին Սայաթ-Նովայի երգերը: Դրանք վկայում են ոչ միայն նրա արվեստի լայն ծավալի, այլև նրա անձնային ճշմարիտ

հավատալիքների՝ սիրո, ուժի, արդարության ձգտման և մարդկային արժանապատվության հանդեպ անվերջ հարգանքի մասին:

Այսպիսով, Սայաթ-Նովան մնում է ոչ թե մի դարաշրջանի, այլ հավերժական հոգևոր մշակույթի երգիչ, որի խոսքը դեռ այսօր էլ հնչում է նույն ուժով՝ հիշեցնելով, որ սերը, ազնվությունը և ճշմարտությունը երբեք չեն հնանում: Նրա թողած ժառանգությունը շարունակելու է ներշնչել նոր սերունդներին, ինչպես ժամանակի անսպառ լույս, որ չի մարում դարերի ընթացքում: